ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **Ն_____-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 27-ի հ.694-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Կասյան փողոցի հ.3 շենքի հ.36՝ 92.33քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17032023-01-0279 վկայական) 50(հիսուն) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Բիայնա Մահարուն՝ Գուրգեն Մահարու անվան տուն-թանգարան հիմնելու պայմանով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներկայացվող նախագծով առաջարկվում է Երևան համայքի սեփականություն հանդիսացող Կասյան փողոցի հ.3 շենքի հ.36՝ 92.23քմ մակերեսով բնակարանը 50(հիսուն) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Բիայնա Մահարուն՝ Գրիգոր Աճեմյանի թոռնուհուն՝ Մահարու տուն թանգարան հիմնելու համար, ով հանդիսանում է արվեստի վաստակավոր գործիչ, հայ դասական անվանի գրող Գուրգեն Մահարու ծոռնուհին:

Գուրգեն Մահարին /Գուրգեն Գրիգորի-Աճեմյան Մահարի/ ծնվել է 1903 թվականի օգոստոսի 1-ին Արևմտյան Հայաստանի Վան քաղաքում: Գորգավաճառությամբ զբաղվող նրա նախնիները սերում են Պարսկաստանից: Վանում նրանք կնքվել են Աճեմյան ազգանունով, որ կազմված է «աջեմ» կամ «աջամ» բառից, որն արաբերեն նշանակում է «օտարածին» թէ «պարսկաստանից»: Հանդիսացել է Խորհրդային Հայաստանի գրականության հիմնադիրներից մեկը և ողջ կյանքի ընթացքում պահպանել է գրական ճիշտ չափանիշները և իր այդ սկզբունքային դիրքի համար մշտապես հալածվել է կոմունիստական գաղափարները պահպանող իրավակազմի կողմից, ենթարկվել է բռնադատության, ինչի հետևանքով վտարվել է գրողների միությունից:

Երևանի 26 կոմիսարների շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1960 թվականի մայիսի 17-ի հ.162 միասնական օրդերի համաձայն էներգետիկների 3-րդ փողոցի / ներկայիս Կասյան փողոցի հ.3 շենքի հ.36/ հ.36 հասցեում գտնվող բնակարանը հատկացվել է Գուրգեն Գրիգորի-Աճեմյան Մահարուն /երկրորդ ընտանիք/ 3 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը և որդուն: Վերջիններս մահացել են /մահվան վկայականները կցված են/ են և մինչ մահը հաշվառված են եղել քննարկվող բնակարանում /հիմք՝ Արաբկիրի անձնագրային բաժանմունքի 06.06.2023թ հ.8/2-3962 տեղեկանք/

Մահարին մահացել է 1969 թվականին, իսկ 1970 թվականին Երևանի 26 կոմիսարների անվան շրջանի մինիստրների սովետի իրավաբանական հանձնաժողովի 19.01.1970 թվականի ըստ օրենքի նո.598 ժառանգական վկայագրի համաձայն նրա գույքի նկատմամբ ժառանգ է հանդիսացել երկրորդ կինը՝ Անտոնինա Աճեմյան-Մահարին և որդին՝ Գուրգեն Աճեմյան-Մահարին, իսկ 1971 թվականի ըստ օրենքի ժառանգական վկայագրի համաձայն նրա հեղինակային իրավունքները ժառանգել է մինչ աքսորյան ամուսնությունից ծնված որդին՝ Գրիգոր Աճեմյանը:

Ստացվում է, որ Մահարու գույքային իրավունքները ժառանգողները մահացել են, իսկ հեղինակային իրավունքների միակ ժառանգորդ է հանդիսանում Գրիգոր Աճեմյան-

Մահարին՝ ով տվել է իր համաձայնությունը, որ բնակարանը տրամադրվի թոռանը՝ Բիայնա Մահարուն:

Քննարկվող գույքի նկատմամբ 17.03.2023թվականի գրանցվել է Երևան համայնքի սեփականության իրավունքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մահարի ընտանիքի մեծագույն երազանքն է Գուրգեն Մահարու տուն-թանգարան հիմնելը, որը կլինի գրողի հիշատակի հավերժացման վկայությունը և հասարակությանը կծանոթացնի գրողի գրական ժառանգություն, պահպանված արխիվի, լուսանկարների, ինչպես նաև ապրելակերպի հետ, առաջարկվում է Կասյան փողոցի հ.3 շենքի հ.36 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հադիսացող գույքը 50(հիսուն) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Գուրգեն Մահարու թոռնուհուն՝ Մահարու տուն թանգարան հիմնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի ավագանու Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ